Հավելված
ՀՀ կառավարության 2024 թվականի
փետրվարի 8-ի N 197 - Ն որոշման

«Հավելված N 7
ՀՀ կառավարության 2014 թվականի
հուլիսի 3-ի N 737-Ն որոշման

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ, ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱՏԱՐՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ԴԵՊՔԵՐԸ, ԿԱՐԳԸ ԵՎ ՉԱՓԵՐԸ

1. ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԴԵՊՔԵՐԸ

1. «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» օրենքով միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեին (այսուհետ՝ կոմիտե) վերապահված լիազորությունների իրականացման համար կոմիտեի միջուկային անվտանգության վարչության, ճառագայթային անվտանգության վարչության և տեխնիկական բաժնի մասնագետներին (այսուհետ՝ մասնագետ) Հայաստանի Հանրապետության կողմից ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի վավերացված միջազգային պայմանագրերով («Միջուկային զենքը չտարածելու մասին» ՄԱԿ-ի 1968 թվականի հունիսի 12-ի պայմանագիր, «Միջուկային զենքի չտարածման պայմանագրի հետ կապված երաշխիքների կիրառման մասին» Հայաստանի Հանրապետության և Ատոմային էներգիայի միջազգային գործակալության միջև համաձայնագիր, «Միջուկային զենքի չտարածման հետ կապված երաշխիքների կիրառման մասին» Հայաստանի Հանրապետության և Ատոմային էներգիայի միջազգային գործակալության միջև համաձայնագրին կից լրացուցիչ արձանագրություն, «Միջուկային անվտանգության մասին» կոնվենցիա, «Միջուկային վթարի մասին օպերատիվ տեղեկացման մասին», «Միջուկային վթարի կամ ռադիացիոն վթարային իրադրության դեպքում

օգնության մասին», «Միջուկային վնասի համար քաղաքացիական պատասխանատվության մասին» Վիեննայի կոնվենցիա, «Միջուկային նյութի ֆիզիկական պաշտպանության մասին» կոնվենցիա, 2005 թվականի հուլիսի 8-ին ստորագրված «Միջուկային նյութի ֆիզիկական պաշտպանության մասին» կոնվենցիայի փոփոխություն, «Աշխատած վառելիքի անվտանգ կառավարման և ռադիոակտիվ թափոնների անվտանգ կառավարման» համատեղ կոնվենցիա), ինչպես նաև միջազգային այլ պարտավորություններով (մասնավորապես՝ Ատոմային էներգիայի միջազգային գործակալության անվտանգության ստանդարտներ) և սույն հավելվածով սահմանված կոմպետենցիաների տիրապետման համար, ինչպես նաև կոմիտեում աշխատանքային ստաժի համար տրվում է հավելավճար:

2. Կոմպետենցիան գիտելիքների, ունակությունների, հմտությունների և վարքագծի ամբողջություն է, որն անհրաժեշտ է «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» օրենքից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերից բխող գործառույթների պատշաճ, լիարժեք և արդյունավետ իրականացման համար:

3. Կոմպետենցիաների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջներին համապատասխան հավելավճարը վճարվում է մասնագետի կողմից կոմպետենցիայի հիման վրա կոմիտեի լիազորություններից բխող, մասնագետի աշխատանքային պայմանագրերով և պաշտոնի նկարագրերով նախատեսված գործառույթների իրականացման համար:

4. Կոմպետենցիան հավաստվում է համապատասխան վկայականով (սերտիֆիկատով), որի հիման վրա կոմպետենցիան ենթակա է հաստատման Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի նախագահի կողմից սահմանված կարգով:

5. Մասնագետին աշխատանքային ստաժի համար հավելավճարը տրվում է կոմիտեում աշխատած տարիների համար:

2. ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՉԱՓԵՐԸ

6. Կոմիտեում աշխատած յուրաքանչյուր տարվա համար մասնագետին տրվում է հավելավճար՝ 2 տոկոսի չափով, սակայն ոչ ավելի, քան պաշտոնային դրույքաչափի 50 տոկոսի չափով:

7. N 1 աղյուսակով նախատեսված և սահմանված կարգով հաստատված կոմպետենցիաներից յուրաքանչյուրի տիրապետման համար մասնագետին հաշվարկվում է հավելավճար, որի հանրագումարի առավելագույն չափը չի կարող գերազանցել 50 տոկոսը:

Աղյուսակ N 1

NN ը/կ	Կոմպետենցիաները	Պաշտոնային դրույքաչափի նկատմամբ հաշվարկվող առավելագույն տոկոսը (%)
1.	ԱԷՄԳ-ի երաշխիքների կիրառում (IAEA Safeguard implementation)	25
2.	Միջադեպերի քննություն (Event Investigation)	25
3.	Անվտանգության գնահատում, դիտարկում և վերլուծություն (Safety assessment, review and analysys)	25
4.	Ջերմահիդրավլիկ, նեյտրոնաֆիզիկական և ամրության հաշվարկների դիտարկում (Thermohydraulic, neutron physics and strength calculations review)	25
5.	Միջազգային տեղեկատվական համակարգերի վարում (International information systems management)	25

8. Սույն հավելվածի 6-րդ և 7-րդ կետերով սահմանված հավելավճարները հաշվարկվում են պաշտոնային դրույքաչափի նկատմամբ:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

09.02.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ